

Հայաստանի
Հանրապետության
Անշարժ գույքի շուկան
2018 թվականի ընթացքում
(վերլուծություն)

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՔԱՆՈՒՄՆԵՐ
REAL PROPERTY CADASTRE

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2018 թվականի ընթացքում (վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է հիմք ընդունելով 2018 թվականի ընթացքում ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները և անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները:


1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2018 թվականի ընթացքում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 162459 իրավունքների պետական գրանցման գործարքներ:

2009-2018 թվականների անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են գծապատկեր 1.1-1-ում.


գծապատկեր 1.1-1




1.1.2 Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 36.0 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 1.9 %:

Գծապատկեր 1.1-2-ում և գծապատկեր 1.1-3-ում ներկայացված են 2018 թվականի ընթացքում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի.

գծապատկեր 1.1-2



գծապատկեր 1.1-3



Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ.

աղյուսակ 1.1-1


	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
Երևան	58515	6.7%	54815
Արագածոտն	8881	12.0%	7928
Արարատ	13935	31.9%	10563
Արմավիր	12739	24.4%	10239
Գեղարքունիք	10565	3.6%	10198
Լոռի	12962	42.9%	9069
Կոտայք	20668	20.7%	17129
Շիրակ	7755	-1.8%	7895
Սյունիք	6728	10.0%	6116
ՎայոցՁոր	3101	-14.9%	3645
Տավուշ	6610	14.9%	5754
Հանրապետություն	162459	13.3%	143351

2018 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2017 թվականի համեմատ աճել է 13.3 %-ով, Երևան քաղաքում՝ 6.7 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 17.0 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 17.7 %-ով:


1.1.3 Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.7 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.9 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-4-ում և գծապատկեր 1.1-5-ում ներկայացված են 2018 թվականի ընթացքում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ տեսակների.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ
ՏՈԿՈՍԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ



Հանրապետությունում ընդհանուր գործարքների քանակական
բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ:

աղյուսակ 1.1-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
1	Օտարում	62939	20.4%	52275
1ա	Առուվաճառք	45637	17.5%	38824
1բ	Նվիրատվություն	14711	10.9%	13268
1գ	Փոխանակում	151	-17.5%	183
1դ	Օտարման այլ տեսակ	2440	-	-
2	Վարձակալություն	9864	3.7%	9513
3	Գրավադրում	26938	10.7%	24325
4	Ժառանգություն	25961	23.1%	21082
5	Օրինականացում	1496	20.5%	1241
6	Առաջնային գրանցում	23819	-7.7%	25801
7	Պետգր. /վերագրանցում/	11442	25.5%	9114
Ընդամենը գործարք		162459	13.3%	143351

Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների:


աղյուսակ 1.1-3

Գործարքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Օտարում	62939	38.7%	23511	40.2%	37.4%	15695	38.1%	24.9%	23733	37.8%	37.7%
1ա	Առուվաճառք	45637	28.1%	17555	30.0%	38.5%	11263	27.4%	24.7%	16819	26.8%	36.9%
1բ	Նվիրատվություն	14711	9.1%	5338	9.1%	36.3%	3762	9.1%	25.6%	5611	8.9%	38.1%
1գ	Փոխանակում	151	0.1%	61	0.1%	40.4%	38	0.1%	25.2%	52	0.1%	34.4%
1դ	Օտարման այլ տեսակ	2440	1.5%	557	1.0%	22.8%	632	1.5%	25.9%	1251	2.0%	51.3%
2	Վարձակալություն	9864	6.1%	5069	8.7%	51.4%	2380	5.8%	24.1%	2415	3.8%	24.5%
3	Գրավադրում	26938	16.6%	14665	25.1%	54.4%	7088	17.2%	26.3%	5185	8.3%	19.2%
4	Ժառանգություն	25961	16.0%	5972	10.2%	23.0%	5897	14.3%	22.7%	14092	22.5%	54.3%
5	Օրինականացում	1496	0.9%	427	0.7%	28.5%	469	1.1%	31.4%	600	1.0%	40.1%
6	Առաջնային գրանցում	23819	14.7%	5748	9.8%	24.1%	6984	17.0%	29.3%	11087	17.7%	46.5%
7	Պետգր. /վերագրանցում/	11442	7.0%	3123	5.3%	27.3%	2661	6.5%	23.3%	5658	9.0%	49.4%
Ընդամենը գործարք		162459	100.0%	58515	100.0%	36.0%	41174	100.0%	25.3%	62770	100.0%	38.6%


1.1.4 Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 33.0 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 2.5% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-6-ում և գծապատկեր 1.1-7-ում ներկայացված են 2018 թվականի ընթացքում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

գծապատկեր 1.1-6



գծապատկեր 1.1-7



Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ.

աղյուսակ 1.1-4

Ը/Ը	Գույքի տեսակ	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
1	բնակարան	50691	12.7%	44981
2	անհատական բնակելի տուն	34577	18.5%	29170
3	արտադրական նշ. շին	3998	-25.7%	5379
4	հասարակական նշ. շին.	14365	11.8%	12853
5	ավտոտնակ	5192	0.0%	5190
6	հող	53636	17.2%	45778
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	33274	20.5%	27609
	Ընդամենը	162459	13.3%	143351

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

աղյուսակ 1.1-5


Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	50691	31.2%	34471	58.9%	68.0%	15101	36.7%	29.8%	1119	1.8%	2.2%
2	անհատական բնակելի տուն	34577	21.3%	8120	13.9%	23.5%	8940	21.7%	25.9%	17517	27.9%	50.7%
3	արտադրական նշ. շին	3998	2.5%	1452	2.5%	36.3%	951	2.3%	23.8%	1595	2.5%	39.9%
4	հասարակական նշ. շին.	14365	8.8%	8118	13.9%	56.5%	4373	10.6%	30.4%	1874	3.0%	13.0%
5	ավտոտնակ	5192	3.2%	3751	6.4%	72.2%	1228	3.0%	23.7%	213	0.3%	4.1%
6	հող	53636	33.0%	2603	4.4%	4.9%	10581	25.7%	19.7%	40452	64.4%	75.4%
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	33274	20.5%	296	0.5%	0.9%	4147	10.1%	12.5%	28831	45.9%	86.6%
	Ընդամենը գործարք	162459	100.0%	58515	100.0%	36.0%	41174	100.0%	25.3%	62770	100.0%	38.6%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն՝ 20.2 %, իսկ ցածրը 0.5 % Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

գծապատկեր 1.2-1



Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ.


աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
Դավթաշեն	2708	-12.0%	3076
Էրեբունի	3863	3.5%	3733
Աջափնյակ	6367	38.0%	4613
Ավան	2844	10.1%	2582
Արաբկիր	8433	-5.1%	8890
Կենտրոն	11808	5.6%	11181
Մալաթիա-Սեբաստիա	5690	6.2%	5356
Քանաքեռ-Զեյթուն	3713	9.9%	3378
Շենգավիթ	6289	8.6%	5791
Նոր-Նորք	5897	9.8%	5372
Նորք-Մարաշ	609	19.9%	508
Նուբարաշեն	294	-12.2%	335
Երևան	58515	6.7%	54815

1.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի ընթացքում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 40.2 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.7 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ:


աղյուսակ 1.2-2

Հ/Հ	Գործարքի տեսակը	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
1	Օտարում	23511	14.5%	20530
1ա	Առուվաճառք	17555	11.7%	15722
1բ	Նվիրատվություն	5338	13.3%	4712
1գ	Փոխանակում	61	-36.5%	96
1դ	Օտարման այլ տեսակ	557	-	-
2	Վարձակալություն	5069	25.2%	4049
3	Գրավադրում	14665	2.9%	14246
4	Ժառանգություն	5972	6.3%	5619
5	Օրինականացում	427	16.0%	368
6	Առաջնային գրանցում	5748	-2.3%	5886
7	Պետգր. /վերագրանցում/	3123	-24.1%	4117
	Ընդամենը գործարք	58515	6.7%	54815

1.2.3 Երևան քաղաքում 2018 թվականի ընթացքում ընդհանուր գործարքների առավել քարձր տոկոսաչափը՝ 58.9 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 2.5 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

գծապատկեր 1.2-3



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ.

աղյուսակ 1.2-3


Ը/Ը	Գույքի տեսակ	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
1	բնակարան	34471	9.1%	31600
2	Անհատական բնակելի տուն	8120	8.2%	7504
3	արտադրական նշ. շին	1452	-13.3%	1674
4	հասարակական նշ. շին.	8118	7.9%	7527
5	ավտոտնակ	3751	-4.9%	3946
6	հող	2603	1.5%	2564
ճա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	296	-31.2%	430
	Ընդամենը	58515	6.7%	54815

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 2018 թվականի ընթացքում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.9 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.0 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Մարզերում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ:


աղյուսակ 1.3-1

Ը/Ը	Գործարքի տեսակ	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
1	Օտարում	39428	24.2%	31745
1ա	Առուվաճառք	28082	21.6%	23102
1բ	Նվիրատվություն	9373	9.5%	8556
1գ	Փոխանակում	90	3.4%	87
1դ	Օտարման այլ տեսակ	1883	-	-
2	Վարձակալություն	4795	-12.2%	5464
3	Գրավադրում	12273	21.8%	10079
4	Ժառանգություն	19989	29.3%	15463
5	Օրինականացում	1069	22.5%	873
6	Առաջնային գրանցում	18071	-9.3%	19915
7	Պետգր. /վերագրանցում/	8319	66.5%	4997
	Ընդամենը գործարք	103944	17.4%	88536

1.3.2 Մարզերում 2018 թվականի ընթացքում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 49.1 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.4 % ավտոտնակների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

**Մարզերում ընդհանուր գործարքների քանակական
բաշխվածությունը ըստ գույքի տեսակի**



Աղյուսակ 1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ.

աղյուսակ 1.3-4

Հ/Հ	Գույքի տեսակ	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
1	բնակարան	16220	21.2%	13381
2	անհատական բնակելի տուն	26457	22.1%	21666
3	արտադրական նշ. շին	2546	-31.3%	3705
4	հասարակական նշ. շին.	6247	17.3%	5326
5	ավտոտնակ	1441	15.8%	1244
6	հող	51033	18.1%	43214
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	32978	21.3%	27179
	Ընդամենը	103944	17.4%	88536


2. ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2018 թվականի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 62939 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 38.7 %-ը:



2009-2018 թվականների անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են գծապատկեր 2.1-1-ում.

գծապատկեր 2.1-1



2.1.2 Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 37.4 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 1.5 %:

Գծապատկեր 2.1-2-ում և գծապատկեր 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.



Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ:

	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
Երևան	23511	14.5%	20530
Արագածոտն	3291	15.2%	2857
Արարատ	5683	34.5%	4224
Արմավիր	5035	28.1%	3932
Գեղարքունիք	3202	3.7%	3088
Լոռի	5443	58.0%	3446
Կոտայք	8422	24.7%	6753
Շիրակ	3067	6.0%	2894
Սյունիք	2303	25.6%	1833
Վայոցձոր	969	3.4%	937
Տավուշ	2013	13.0%	1781
Հանրապետություն	62939	20.4%	52275


2018 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2017 թվականի համեմատ աճել է 20.4 %-ով, Երևան քաղաքում՝ 14.5 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 21.5 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 26.1 %-ով:

2.1.3 Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 36.8 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.2 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:


Գծապատկեր 2.1-4-ում և գծապատկեր 2.1-5-ում ներկայացված են 2018 թվականի ընթացքում հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

գծապատկեր 2.1-4

Հանրապետությունում օտարման գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Հանրապետությունում օտարման գործարքների քանակական
բաշխվածությունը ըստ գույքի տեսակի




Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի ընթացքում անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի:

աղյուսակ 2.1-2

Ը/Ը	Գույքի տեսակ	Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	23192	36.8%	15747	67.0%	67.9%	6943	44.2%	29.9%	502	2.1%	2.2%
2	անհատական բնակելի տուն	10840	17.2%	2684	11.4%	24.8%	2773	17.7%	25.6%	5383	22.7%	49.7%
3	արտադրական նշ. շին.	782	1.2%	231	1.0%	29.5%	176	1.1%	22.5%	375	1.6%	48.0%
4	հասարակական նշ. շին.	2951	4.7%	1628	6.9%	55.2%	962	6.1%	32.6%	361	1.5%	12.2%
5	ավտոտնակ	2559	4.1%	1858	7.9%	72.6%	613	3.9%	24.0%	88	0.4%	3.4%
6	հող	22615	35.9%	1363	5.8%	6.0%	4228	26.9%	18.7%	17024	71.7%	75.3%
ՃԱ	ա/թ գյուղ նշ.հող	13213	21.0%	106	0.5%	0.8%	1504	9.6%	11.4%	11603	48.9%	87.8%
	Ընդամենը գործարք	62939	100.0%	23511	100.0%	37.4%	15695	100.0%	24.9%	23733	100.0%	37.7%

Գծապատկեր 2.1-6-ում և աղյուսակ 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գործարքի տեսակների:

ՕՏԱՐՈՒՄ



աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոցձոր	Տավուշ	Մարզերը	Ընդամենը
Առուվաճառք	17555	2410	4453	3988	1673	3550	6451	2033	1548	713	1263	28082	45637
Նվիրատվություն	5338	846	1175	968	1137	903	1817	982	660	248	637	9373	14711
Փոխանակում	61	11	10	2	4	8	49	0	2	2	2	90	151
Օտարման այլ տեսակ	557	24	45	77	388	982	105	52	93	6	111	1883	2440
Ընդամենը	23511	3291	5683	5035	3202	5443	8422	3067	2303	969	2013	39428	62939


3. ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2018 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 45637 գործարք:

2009-2018 թվականների անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են գծապատկեր 3.1-1-ում.



գծապատկեր 3.1-1



3.1.2 Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 38.5 %, իսկ առավել ցած

ըը՝ Վայոց Ձորի մարզում 1.6 %:

Գծապատկեր 3.1-2-ում և գծապատկեր 3.1-3-ում ներկայացված են 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.



Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ:

	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
Երևան	17555	11.7%	15722
Արագածոտն	2410	12.5%	2143
Արարատ	4453	36.6%	3261
Արմավիր	3988	32.8%	3002
Գեղարքունիք	1673	-16.5%	2003
Լոռի	3550	35.7%	2616
Կոտայք	6451	22.4%	5270
Շիրակ	2033	7.6%	1889
Սյունիք	1548	32.4%	1169
Վայոց Ձոր	713	6.3%	671
Տավուշ	1263	17.2%	1078
Հանրապետություն	45637	17.5%	38824


2018 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի համեմատ աճել է 17.5 %-ով, Երևան քաղաքում՝ 11.7 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 20.1 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 22.6 %-ով:

3.1.3 Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.4 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.3 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:


Գծապատկեր 3.1-4-ում և գծապատկեր 3.1-5-ում ներկայացված են 2018 թվականի ընթացքում հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների.

գծապատկեր 3.1-4

Հանրապետությունում առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ:

աղյուսակ 3.1-2


Ը/Ը	Գույքի տեսակ	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
1	բնակարան	17049	18.8%	14355
2	անհատական բնակելի տուն	6540	23.9%	5278
3	արտադրական նշ. շին	609	13.6%	536
4	հասարակական նշ. շին.	2223	2.6%	2167
5	ավտոտնակ	2204	5.0%	2100
6	հող	17012	18.2%	14388
ճա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	9288	13.8%	8160
	Ընդամենը	45637	17.5%	38824

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի ընթացքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 20.3%, իսկ առավել ցածրը՝ 0.4% Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

գծապատկեր 3.2-1



Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ.


աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
Դավթաշեն	880	0.9%	872
Էրեբունի	1067	22.2%	873
Աջափնյակ	2008	48.5%	1352
Ավան	961	3.1%	932
Արաբկիր	2550	-5.5%	2697
Կենտրոն	3496	9.4%	3195
Մալաթիա-Սեբաստիա	1672	5.6%	1583
Քանաքեռ-Զեյթուն	1064	27.7%	833
Շենգավիթ	1717	16.9%	1469
Նոր-Նորք	1928	13.5%	1698
Նորք-Մարաշ	136	14.3%	119
Նուբարաշեն	76	-23.2%	99
Երևան	17555	11.7%	15722

3.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի ընթացքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 66.6 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.1 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի.

գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ.

աղյուսակ 3.2-2


Ը/Ը	Գույքի տեսակ	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
1	բնակարան	11700	15.5%	10130
2	անհատական բնակելի տուն	1725	10.8%	1557
3	արտադրական նշ. շին	185	11.4%	166
4	հասարակական նշ. շին.	1241	-3.4%	1285
5	ավտոտնակ	1587	-0.8%	1600
6	հող	1117	13.5%	984
ճա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	82	-2.4%	84
Ընդամենը		17555	11.7%	15722

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.3.1 Մարզերում 2018 թվականի ընթացքում առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 56.6 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.5 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

գծապատկեր 3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ.

աղյուսակ 3.3-1

		2018 թվական	փոփոխումը	2017 թվական
1	բնակարան	5349	26.6%	4225
2	անհատական բնակելի տուն	4815	29.4%	3721
3	արտադրական նշ. շին	424	14.6%	370
4	հասարակական նշ. շին.	982	11.3%	882
5	ավտոտնակ	617	23.4%	500
6	հող	15895	18.6%	13404
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	9206	14.0%	8076
Ընդամենը		28082	21.6%	23102


3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2018 թվականի ընթացքում անշարժ գույքի 4990 առուվաճառքի գործարքների կողմ են հանդիսացել օտարերկրյա քաղաքացիները, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 10.9 %-ը:

Առուվաճառքի գործարքներից 1581-ի դեպքում օտարերկրյա քաղաքացիները հանդիսացել են միայն գնորդ, 3247-ի դեպքում միայն վաճառող, իսկ 162 առուվաճառքի գործարքի դեպքում երկու կողմն էլ հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիներ:


Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2018 թվականի ընթացքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը.

գծապատկեր 3.4-1




Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2018 թվականի ընթացքում գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ գծապատկեր 3.4-3-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված գույքերի
բաշխվածությունը ըստ տեսակների



Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված գույքերի
բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը առուվաճառքների գործարքներում ըստ Երևան քաղաքի և մարզերի.

աղյուսակ 3.4-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	17555	1102	63.2%	6.3%	1270	37.3%	7.2%
Արագածոտն	2410	58	3.3%	2.4%	121	3.5%	5.0%
Արարատ	4453	52	3.0%	1.2%	411	12.1%	9.2%
Արմավիր	3988	129	7.4%	3.2%	379	11.1%	9.5%
Գեղարքունիք	1673	28	1.6%	1.7%	122	3.6%	7.3%
Լոռի	3550	54	3.1%	1.5%	253	7.4%	7.1%
Կոտայք	6451	193	11.1%	3.0%	335	9.8%	5.2%
Շիրակ	2033	60	3.4%	3.0%	173	5.1%	8.5%
Սյունիք	1548	23	1.3%	1.5%	132	3.9%	8.5%
Վայոց ձոր	713	8	0.5%	1.1%	67	2.0%	9.4%
Տավուշ	1263	36	2.1%	2.9%	146	4.3%	11.6%
Հանրապետություն	45637	1743	100.0%	3.8%	3409	100.0%	7.5%

Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

աղյուսակ 3.4-2

		Առուվաճառքի առքի գործարք ների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	17049	938	53.8%	5.5%	1730	50.7%	10.1%
2	անհատական բնակելի տուն	6540	283	16.2%	4.3%	654	19.2%	10.0%
3	արտադրական նշ. շին	609	18	1.0%	3.0%	18	0.5%	3.0%
4	հասարակական նշ. շին.	2223	77	4.4%	3.5%	60	1.8%	2.7%
5	ավտոտնակ	2204	134	7.7%	6.1%	85	2.5%	3.9%
6	հող	17012	293	16.8%	1.7%	862	25.3%	5.1%
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	9288	30	1.7%	0.3%	525	15.4%	5.7%
	Ընդամենը	45637	1743	100.0%	3.8%	3409	100.0%	7.5%

Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված են 2018 թվականի ընթացքում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված, իսկ աղյուսակ 3.4-4-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի համամասնությունները ըստ պետությունների և տարածաշրջանների:

աղյուսակ 3.4.3

h/h	Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ. նշ	Ընդամենը
1	Ռուսաստանի Դաշնություն	499	154	11	45	66	102	1	877
2	ԱՄՆ	134	35	0	13	21	43	4	246
3	Իրան	73	20	0	7	19	17	0	136
4	Սիրիա	10	2	0	0	6	0	0	18
5	Եվրոպական պետություններ	110	37	3	6	7	23	0	186
6	ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	60	9	1	3	7	7	1	87
7	Այլ պետություններ	52	26	3	3	8	101	24	193
	ԸՆԴԱՄԵՆԸ	938	283	18	77	134	293	30	1743

աղյուսակ 3.4.4


h/h	Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ. նշ	Ընդամենը
1	Ռուսաստանի Դաշնություն	1368	565	12	49	58	739	470	2791
2	ԱՄՆ	89	27	0	6	6	20	4	148
3	Իրան	52	4	2	3	8	17	4	86
4	Սիրիա	7	0	0	0	2	1	0	10
5	Եվրոպական պետություններ	83	12	0	1	0	16	2	112
6	ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	100	39	0	3	5	49	37	196
7	Այլ պետություններ	31	7	0	2	6	20	9	66
	ԸՆԴԱՄԵՆԸ	1730	654	14	64	85	862	526	3409

3.5 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.5.1 Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 17049 գործարք: 2018 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի համեմատ աճել է 18.8 %-ով:

Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի.

Հանրապետությունում բազմաբնակարան բնակելի շենքերի
բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային
բաշխվածությունը



Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ:

աղյուսակ 3.5-1


	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
Երևան	11700	15.5%	10130
Արագածոտն	147	61.5%	91
Արարատ	435	17.6%	370
Արմավիր	598	27.0%	471
Գեղարքունիք	296	15.6%	256
Լոռի	893	18.8%	752
Կոտայք	1428	33.3%	1071
Շիրակ	743	16.6%	637
Սյունիք	515	69.4%	304
ՎայոցՁոր	100	9.9%	91
Տավուշ	194	6.6%	182
Հանրապետություն	17049	18.8%	14355

3.5.2 Երևան քաղաքում 2018 թվականի ընթացքում իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 11700 գործարք, 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի համեմատ աճել է 15.5 %-ով:

Երևան քաղաքում 2018 թվականի ընթացքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 19.2 %, իսկ առավել ցածրը՝ 0.3-ական % Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջաններում :

Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

գծապատկեր 3.5-2



Աղյուսակ 3.6-2-ում ներկայացված են 2018 թվականին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով՝ ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների.

Վարչական շրջան	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
Կենտրոն միջին	529200	18.7%	445800
Արարկիր	370500	7.1%	345800
Քանաքեռ-Զեյթուն միջին	277500	2.5%	270600
Նոր-Նորք միջին	242800	2.4%	237000
Էրեբունի միջին	252800	5.3%	240100
Շենգավիթ միջին	253400	3.6%	244600
Դավթաշեն միջին	286700	11.2%	257900
Աջափնյակ միջին	251100	7.2%	234200
Մալաթիա-Սեբաստիամ միջին	240500	2.9%	233800
Ավան միջին	257200	2.3%	251500
Նուբարաշեն միջին	165400	5.3%	157100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018 թվականին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի համեմատ՝ աճել 7.2%-ով:


3.5.3 2018 թվականի ընթացքում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 5349 բնակարան, ընդ որում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների 6.1 %-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2018 թվականի ընթացքում մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի համեմատ աճել է 26.6 %-ով:

Գծապատկեր 3.5-3-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

գծապատկեր 3.5-3

**Մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի
բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական
բաշխվածությունը**



Աղյուսակ 3.6-3-ում ներկայացված են 2018 թվականին մարզերի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների, վաճառահանված բնակարանների առաջարկվող գների և մասնագիտացված կազմակերպության կողմից անշարժ գույքի գների վերաբերյալ տրամադրված տվյալների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1մ² մակերեսի հաշվարկով.

Աղյուսակ 3.6-3

Մարզը	Քաղաքը	2018 թվական
Արագածոտն	Աշտարակ	111200
	Ապարան	80500
	Թալին	71700
Արարատ	Արտաշատ	101000
	Մասիս	102900
	Վեդի	93100
	Արարատ	82200
Արմավիր	Վաղարշապատ	123600
	Արմավիր	92000
	Մեծամոր	65900
Գեղարքունիք	Սևան	83800
	Գավառ	54250
	Մարտունի	120100
	Վարդենիս	54800
	Ճամբարակ	38150
Լոռի	Վանաձոր	78600
	Ստեփանավան	67400
	Սպիտակ	93400
	Ալավերդի	49700
	Տաշիր	56900
	Թումանյան	21000
	Շամլուղ	24900
	Ախթալա	34800
Կոտայք	Արուսյան	158850
	Նոր Հաճն	126600
	Բյուրեղավան	97800
	Եղվարդ	118600
	Հրազդան	59400
	Ծաղկաձոր	285000
	Չարենցավան	71800
Շիրակ	Գյումրի	89900
	Արթիկ	64700
	Մարալիկ	50100
Սյունիք	Գորիս	134300
	Կապան	104200
	Սիսիան	84500
	Մեղրի	100700
	Քաջարան	101700


	Դաստակերտ	19300
Վայոց ձոր	Վայք	87000
	Եղեգնաձոր	120500
	Ջերմուկ	106200
Տավուշ	Դիլիջան	109000
	Իջևան	115400
	Բերդ	89900
	Նոյեմբերյան	57700
	Այրում	54000

3.6 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում իրականացվել է հողերի առուվաճառքի 17012 գործարք: 2018 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցված հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի համեմատ աճել է 18.2 %-ով:

Գծապատկեր 3.6-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի:

գծապատկեր 3.6-1




Աղյուսակ 3.6-1-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի նկատմամբ:

	2018 թվական	փոփոխումը	2017 թվական
Երևան	1117	13.5%	984
Արագածոտն	1824	6.7%	1709
Արարատ	2857	35.0%	2117
Արմավիր	2497	35.1%	1848
Գեղարքունիք	912	-31.9%	1340
Լոռի	1689	66.2%	1016
Կոտայք	3670	16.0%	3165
Շիրակ	668	-5.9%	710
Սյունիք	608	31.6%	462
Վայոցշոր	466	2.2%	456
Տավուշ	704	21.2%	581
Հանրապետություն	17012	18.2%	14388

3.5.2 Երևան քաղաքում 2018 թվականի ընթացքում իրականացվել է հողերի առուվաճառքի 1117 գործարք: 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի համեմատ աճել է 13.5 %-ով:

Գծապատկեր 3.6-2-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում հողի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

գծապատկեր 3.6-2



2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Աջափնյակ՝ 17.7 %, իսկ առավել ցածրը՝ 2.0 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում իրականացվել է հողերի առուվաճառքի 1117 գործարք՝ 100.71 հա ընդհանուր մակերեսով, որոնք, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 82 միավոր (7.25 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 594 միավոր (48.10 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 402 միավոր (35.23 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 37 միավոր (9.94 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 2 միավոր (0.19 հա) մակերեսով:

Երևան քաղաքում վաճառված հողերի քանակի 22.4 %-ը կամ 250 միավոր (17.50 հա) ընդհանուր մակերեսով հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 77.6 %-ը կամ 867 միավոր (83.21 հա)՝ մասնավոր սեփականության հող: 2018 թվականի ընթացքում Երևանում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 7 գործարք (0.10 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի:

Աղյուսակ 3.7-2-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության, բացառությամբ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի:

Աղյուսակ 3.7-2

Վարչական շրջաններ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	գյուղ. նշանակության հողեր		արդյունաբերական օբյեկտների հողեր		բնակավայրերի հողեր				գյուղ. նշանակության հողեր		արդյունաբերական օբյեկտների հողեր		բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	0	0.00	15	0.85	4	0.09	0	0.00	0	0.00	93	5.77	35	5.15
Էրեբունի	0	0.00	0	0.00	6	0.18	13	0.39	0	0.00	3	0.60	12	0.60	12	0.67
Աջափնյակ	0	0.00	0	0.00	14	0.71	18	0.39	0	0.00	1	0.22	73	8.73	80	5.02
Ավան	0	0.00	3	0.68	16	1.60	10	0.37	0	0.00	1	0.11	41	2.51	21	0.92
Արաբկիր	0	0.00	0	0.00	9	0.45	3	0.06	0	0.00	3	1.95	32	2.46	9	1.57
Կենտրոն	0	0.00	1	0.02	16	0.17	14	0.55	0	0.00	1	0.10	37	3.41	18	1.20
Մալաթիա- Սեբաստիա	0	0.00	1	0.05	5	6.70	17	0.76	78	6.64	2	1.86	56	2.53	39	10.23
Քանաքեռ- Զեյթուն	0	0.00	0	0.00	6	0.41	6	0.07	0	0.00	1	0.0002	18	2.69	17	3.01
Շենգավիթ	0	0.00	6	0.92	6	0.14	10	0.05	4	0.61	8	3.24	44	1.72	7	1.31
Նոր Նորք	0	0.00	1	0.02	10	0.23	30	0.62	0	0.00	5	0.17	48	3.76	24	1.08
Նորք-Մարաշ	0	0.00	0	0.00	8	1.01	1	0.01	0	0.00	0	0.00	10	0.65	11	1.68
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.003	0	0.00	0	0.00	19	0.82	2	0.03
Ընդամենը	0	0.00	12	1.69	111	12.45	127	3.36	82	7.25	25	8.25	483	35.65	275	31.87

Աղյուսակ 3.7-3-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային և ուղղակի վաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության:


Վարչական շրջաններ	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	ընդամենը		արդյունաբերական օբյեկտների հողեր		ընակավայրերի հողեր				ընդամենը		գյուղ. նշանակության հողեր		արդյունաբերական օբյեկտների հողեր		ընակավայրերի հողեր			
					ընակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								ընակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր	
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)
Դավթաշեն	3	0.02	0	0.00	2	0.01	1	0.01	16	0.92	0	0.00	0	0.00	13	0.84	3	0.08
Էրերունի	6	0.12	0	0.00	3	0.11	3	0.01	13	0.44	0	0.00	0	0.00	3	0.06	10	0.38
Աջափնյակ	15	0.51	0	0.00	11	0.45	4	0.06	17	0.59	0	0.00	0	0.00	3	0.26	14	0.33
Ավան	8	0.26	1	0.13	5	0.08	2	0.05	21	2.39	0	0.00	2	0.55	11	1.53	8	0.31
Արաբկիր	10	0.47	0	0.00	7	0.41	3	0.06	2	0.04	0	0.00	0	0.00	2	0.04	0	0.00
Կենտրոն	24	0.48	2	0.02	14	0.09	9	0.37	7	0.27	0	0.00	0	0.00	2	0.09	5	0.18
Մալաթիա-Սերաստիա	10	6.73	0	0.00	4	6.69	6	0.04	13	0.78	0	0.00	1	0.05	1	0.01	11	0.72
Քանաքեռ-Զեյթուն	9	0.18	0	0.00	4	0.12	5	0.06	3	0.29	0	0.00	0	0.00	2	0.28	1	0.01
Շենգավիթ	10	0.22	2	0.16	3	0.05	5	0.01	12	0.90	0	0.00	4	0.76	3	0.10	5	0.04
Նոր Նորք	16	0.26	1	0.02	4	0.04	11	0.20	25	0.61	0	0.00	0	0.00	6	0.19	19	0.42
Նորք-Մարաշ	3	0.06	0	0.00	3	0.06	0	0.00	6	0.96	0	0.00	0	0.00	5	0.95	1	0.01
Նուբարաշեն	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Ընդամենը	115	9.31	6	0.33	60	8.11	50	0.87	135	8.19	0	0.00	7	1.36	51	4.35	77	2.48

3.5.3 Մարզերում 2018 թվականի ընթացքում իրականացվել է հողերի առուվաճառքի 15895 գործարք, ընդ որում նշված առուվաճառքի գործարքների 80.0%-ը գրանցվել է գյուղական ընակավայրերում:

2018 թվականի ընթացքում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի համեմատ՝ աճել 18.6 %-ով:

Գծապատկեր 3.6-3-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում մարզերում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

գծապատկեր 3.6-3



Մարզերում 2018 թվականի ընթացքում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Կոտայքի՝ 23.1 %, իսկ առավել ցածրը՝ 2.91 % Վայոց Ձորի մարզերում:

2018 թվականի ընթացքում մարզերում իրականացվել է հողերի առուվաճառքի 15895 գործարք՝ 11271.19 հա ընդհանուր մակերեսով, որոնք, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 9206 միավոր (10565.25 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 4741 միավոր (412.08 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 1572 միավոր (87.38 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 242 միավոր (77.71 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 42 միավոր (27.49 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 84 միավոր (55.48 հա)
- անտառային հող՝ 1 միավոր (0.01 հա),
- ջրային հող՝ 7 միավոր (45.79 հա):

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 4793.90 հա, որից 4696.61 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Մարզերում վաճառված հողերի քանակի 25.5 %-ը կամ 4047 միավորը (3097.95 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 74.5 %-ը կամ 11848 միավորը (8173.24 հա)՝ մասնավոր սեփականության հող: 2018 թվականի ընթացքում մարզերում գրանցվել է կառուցապատման իրավունքի վաճառքի 149 գործարք (152.42 հա):

Աղյուսակ 3.7-4-ում ներկայացված է 2018 թվականի ընթացքում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի՝ բացառությամբ առողջարարական նպատակով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, անտառային, ջրային հողերի.

Աղյուսակ 3.7-4

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	գյուղ. նշանակության հողեր		արդյունաբերական օբյեկտների հողեր		բնակավայրերի հողեր				գյուղ. նշանակության հողեր		արդյունաբերական օբյեկտների հողեր		բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)
Արագածոտն	330	436.42	8	0.59	52	3.94	70	5.61	1037	996.59	0	0.00	306	34.67	19	0.87
Արարատ	284	377.87	21	5.44	169	13.29	79	4.30	1496	932.60	18	27.75	743	65.76	43	1.35
Արմավիր	277	1428.96	24	3.39	25	2.49	72	3.66	1212	3267.66	13	4.17	833	82.93	41	0.65
Գեղարքունիք	37	43.17	18	5.60	153	11.84	159	7.24	299	238.66	6	0.57	174	22.52	51	4.83
Լոռի	325	52.06	28	2.98	142	2.55	463	22.33	427	276.23	15	0.37	177	15.63	66	3.22
Կոտայք	183	276.00	20	10.38	229	8.35	106	4.23	1818	942.36	10	2.23	1140	99.24	131	10.43
Շիրակ	32	25.03	10	6.66	49	1.63	43	4.96	388	409.40	8	0.90	113	12.24	24	0.87
Սյունիք	75	47.81	11	0.75	57	2.31	38	5.02	282	184.64	5	0.80	104	8.46	21	0.73
Վայոց ձոր	50	115.15	5	0.72	30	1.35	26	0.65	255	240.56	0	0.00	72	8.54	22	0.92
Տավուշ	96	39.88	19	3.94	60	3.19	67	2.55	303	234.20	3	0.47	113	11.15	31	2.96
